ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղղիա։— Այս ամիս ամենուն ուշադրութիւնը գրաւեր էր Գաղղիա. ընդհանուր ընտրութիւնքն կը նկատուէին ոչ միայն իրը առ հաւատչեայ մը ներքին խաղաղութեան, այլ բովանդակ Եւրոպիոյ ապագայ ապահովութեան և հանգստեան։ Այս ընտրութիւնքն տեղի ունեցան 'ի զարմանս ամենեցուն, ուրիշ անգամներէ աւելի հանդարտութեամբ և լռութեամբ, սակայն արդիւնքն եղաւ մի և նոյն, այսինքն Հասարակապետութեան յաղթանակը։ Իւրաքանչիւր կուսակցութեանց գլուխք և առաջնորդք, բազմաթիւ հրաւէրներով և քաջալերութեամբք, յորդորեր էին իրենց կողմնակիցքն մնալ միշտ միաբան. սակայն ամէն ջանք 'ի զուր ելաւ, վասն զի հասարակապետական ընտրելիք նախընթացաբար այլ և այլ միջոցներով շահեր էին բազմաթիւ անձինք։

Այս տարուան ընտրութիւնք նշանակութիւն մ'աւելի ունէին Պուլանժէ զօրավարին պատճառաւ. թէպէտ պուլանժէականաց մեծ բազմութիւն մը ընտրուեցաւ նոր երեսփոխանաց ժողովքին մէջ, սակայն վերջնական յաղթանակն հասարակապետութիւնն վաստակեցաւ. Պուլանժէ շատ վշտացաւ ընտրութեանց այս անյաջող ելքին վրայ, և եթէ չկարենանք ալ վերջնական, գէթ մեծ հարուած մը կրընամք համարիլ զայս իրեն։ Որոշ չգիտցուիր նոր խորհրդարանին առաջին գումարման օրը. սակայն կառավարութիւնը կը ջանայ փութացնել զայն, և առաջին նստին մէջ պաշտօնարանը պիտի ներկայացնէ իւր անկումը։

Գերմանիա։— Գերմանիոյ կայսերական ընտանիքը կը մեկնի յԱթէնք Գահաժառանգին պսակման հանդիսին ներկայ գտնուելու համար, յետոյ կը լսենք որ պիտի երթայ 'ի Ռ. Պօլիս յայցելութիւն վեհ. Սուլթանին։

Այս ամսոյս մէջ Ռուսիոյ կայսրն ևս պիտի գայ 'ի Գերլին յայցելութիւն Գերմանիոյ կայսեր, բայց պիտի զգուշանայ ո և է պաշտօնական կերպարանք մը տալու իւր այս այցելութեան։

Սերպիա։— Սերպիոյ դժբաղդ թագուհին Նաթալիա այս օրերս դարձեալ մնաւ 'ի Սերպիա. 'ի Գելկրատ գրեթէ յաղթական կերպով ընդունեցաւ զինքը ժողովուրդը. այժմ կը փափագի թագաւորին իր որդւոյն հետ տեսակցիլ, բայց խնամակալութիւնն չի թողուր և կ'առաջարկէ որ տեսակցութիւն մը խնդրէ պարզ իրը տիկին մը, թագուհին ալ բացարձակապէս այս բանս յանձն չառներ. սակայն հասարակաց կարծիքն է 'ի շահ թագուհւոյն։

digitised by A.R.A.R.@